

ՄԵԼԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Հ ի Մ Ն Ա Պ Ի Դ Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻՍԱԳՈՒԹԻՒՆ

Մի խոշոր կարիք.—ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մասնով. Իշխան Իլիա ձափձափած է հայերը.
Նամակ Նոր-Բայազետից. Նամակ Խմբագրու-
թիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Երկրորդից. Արտաքին լուրեր.
ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԳԱՆ. Նամակ Թիւրքիայից. Դրութիւնը
վախում:

ՄԻ ԽՈՇՈՐ ԿԱՐԻՔ

Ոչ մի տեղ երկրի բնակիչները այն-
քան դժուարութիւններ են անյարմա-
րութիւններ չեն գտնում միմեանց հետ
հարգողակցութիւն ունենալու, ինչպէս
մեր Անգրկովկասում: Մեր լեռները,
բազմաթիւ ձորերը, քարոտ գետախոր-
շտ տեղերում ոչ միայն անկարելի են
գարձել սայլերի գործադրութիւնը, այլ
երբեմն դժուարացնում են նոյն իսկ ձի-
ւորով ձանապարհորդութիւնը կամ մարդ-
կանց ոտով անցնելը: Իսկ երբ ձիւների
հաջքի կամ անձրենների պատճառով գե-
տերը յորդանում են, ձորերը ջրով լցվում,
և երբեմն նոյն իսկ ցամաք հովիտները
ջրի հոսանքների փոխումով, այդ դեպքե-
րում ընդհատվում է երկրի զանազան մա-
սերի միմեանց հետ հարգողակցութիւնը
օրերով, շաբաթներով և երբեմն ամիսներով:
Թէև կառավարութիւնը վաղուց հետա-
քըքրվում է մեր երկրի հարգողակցութեան
ձանապարհների բարեօրոշման խնդրով,
բայց մինչև այժմ նա կարողացել է միայն մի
քանի գլխաւոր գծերի մասին հոգալ և
չինչ մի քանի խոշոր խնդիրներ, իսկ
գաւառական միւս շրջաններում գրութիւն-
ը մնում էր նախկին նահապետական
ձևի մէջ: Կառավարութիւնը այժմ նո-
րից յարուցել է հարգողակցութեան ձա-
նապարհների բարեօրոշման հարցը և մտա-
դիր է մշակել ծրագիր ձանապարհների մի
նոր ցանց իրագործելու մեր երկրում:

ԲԱՆԱՍԻՐԱԳԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Կ. Պոլսի, մարտի 14-ին

Տեղւոյն հայ մամուլի կեդրոն յեղեղէն մին՝
«Փոնիզ»-ի 2632 թիւում մէջ փութ ու փոշու
խմբագրական մը հրատարակած է, հիմնուելով
Նիւ-Յորքի լրկուած նամակի մը, որ, իբրեւ թէ,
եկեղեցական մը գրեթէ է եղեր՝ ցաւ յայտնելով,
որ «Փոնիզ» կարօտ ազգայնոց ի նպաստ հան-
դանակաւ գումար մը աւելու և ուղղակի պատ-
րաւրաբար զրկելու համար մեծ դժուարութիւն
կրեր է, որովհետև արտաքին թուրքիոյ հայ լե-
զուաւ հրատարակեալ թերթերուն գրեթէ ամեն-
քն ալ հրապարակազոյժ կ'ընեն եղեր թէ Կ.
Պոլսոյ պատրիարքարանը չարաչար կը գործածէ
նպատակաւ հանգանակեալ գումարները, նպա-
տակէն օտար ու տար բաներու համար կը վառ-
նէ, թէ այս չարախօսութիւններէն զայն խնդրով
բարեմիտ ու բարեխէր անձիւք չեն հանի եղեր,
որ ուղղակի պատրիարքարան զրկուին իրենց
նպատակ գումարները և մինչև իսկ ապահով ու
նախամեծար կը համարին եղեր օտարազգի քա-
րողայ յանձնել կարօտեղոց ձեռքը հասցունելու
համար անվրէպ:

«Փոնիզ»-ի այս նամակի վրա խօսելով՝ սանձա-
քալ կը յարձակի արտասանման հրատարակուած
հայ թերթերուն վրա առհասարակ, անոնց ա-
զատախօսութիւնը, անհաշուութիւնը, բարեխի-
րութիւնը, ազգասիրութիւնը՝ ձևացեալ կը
հուշակէ և զանոնք չարախօս, լեզուաւնի,
ստախօս կանուանէ: Ամենք—կըսէ—Թիւրքիոյ
մէջ հրատարակեալ հայ թերթերու, պատրիար-
քարանի, պատրիարքի ու վարչութեան վրայ
ուղիորդն ստուծիւն կը թափեն և գայթակղու-
թիւն կը սփռեն ամեն ան տեղերը—Ռուսմանիս,

Այդ հարցի կարևորութիւնը զգացված
է վաղուց. բայց չը կան հիմնարկութիւն-
ներ, որոնք կազմակերպէին և ղեկավարէին
ձանապարհներ անցկացնելու գործը: Այդ
բաղադրեալ և դժուար գործի մէջ նա-
խաձեռնութիւն և ղեկավարութիւն պէտք է
վերցնեն իրանց վրա կամ կառավարութիւնը,
կամ տեղական ուրիշ հիմնարկութիւնները:
Ռուսաստանի ներքին նահանգներում այդ
գործի հսկողն են տեղական ինքնավարու-
թեան, այսինքն զեմստօրի օրգանները, ո-
րոնք միայն այժմ գոյութիւն ունեն մեր
երկրում: Միայն քաղաքները մեր երկրում
կարողութիւն ունեն իրանց նախաձեռնու-
թեամբ և հսկողութեամբ բարեօրոշել իրանց
փողոցները և քաղաքի շուրջ գտնվող ձա-
նապարհները. իսկ գրանցի գուր ամեն
հոգս թողնված է տեղական իշխանութեանը:
Անկասկած է մեր երկրում ձանապարհ-
ների վերաբերմամբ ամենալաւ հոգատարը
կը լինէր զեմստօրի, որի իրաւործու-
թեան մասին խնդրամատոյց են ներկա-
յում Թիֆլիսի և Քուծայիսի ազնուակա-
նութիւնը և Կիւղաանտեսական ընկերու-
թիւնը: Բայց զեմստօրի հարցը ունի իր
մշակման և լուծման ընթացքը, որ կարող
է և այնքան շուտ չը լրացնել իր շրջանը:
Մինչդեռ ամեն օր աւելի ու աւելի է
զգալի դառնում հարգողակցութեան ձա-
նապարհների բարեօրոշման կարևորութիւ-
նը: Եթէ զեմստօրի հարցը շուտով չը
պէտք է դրական լուծում ստանար, ան-
հրաժեշտ է, որ ուրիշ միջոցներ ծրա-
գրվէին երկրի այդ խոշոր կարիքներից մէ-
կին բաւարարութիւն տալու:

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Թիւրքահայ մամուլը մի օրգանով էլ հարստա-
ցաւ: Մարտի 8-ից Կ. Պոլսում սկսեց հրատա-

րարել «Մարտի», Գաղղիա, Աւստրիա, մա-
նաւանդ Ամերիկա—յորս հայ կենտրոնի ազգայ-
ին վարչական գործոց, վարմանց ու ձեռնար-
կութեանց վրայ բաւական ծանօթութիւն չունին
եղեր այդ երկրացի մէջ հաստատուել մեր ազգա-
յինը, ինչպէս նաև Թուրքիոյ հայ թերթե-
րու ոգւոյն և ուղղութեանը վրայ:

Այն եկեղեցականը որ, ըստ «Փոնիզ»-ի, վերո-
յիշեալ տեղեկութիւնները տուեք է Նիւ-Յորքէն,
անշուշտ չէ այն Մայրոց վարդապետը, որու
մասին ամեն չարամիտ ու խայտառակ գրու-
թիւններով լեցուց յիշեալ թերթի խմբագիրը
իր ազտութիւնները և չի թողուց անուր չարիք
մը՝ զոր յանդիման և անխնայ չի վերադրեց
անոր՝ շահագէտ «Փոնիզ»-ի մը գաղափարակ-
ցութեանը ու շահակցութեանը, և այս ամենը
բոլոր, իբրեւ ազատաւիտ, անաշու, բա-
րեւէր ու ազգասէր հրապարակագիր, մի-
միայն մէկ քանի թալէտ կորցնու համար խեղճ
վարդապետէն և, երբ այդ խայտառակ, լիբր ու
զրպարտիչ հրատարակութիւններուն իբրեւ բոլո-
րովին տուտ, անխնայ, չարամիտ ու շահասէր ոգ-
ւով գրուածներու, հերքումը պահանջուեցաւ,
«Փոնիզ»-ի պատուականաց պատուական խմբա-
գիրը, Ալաւաճեան, քննա չի կարծեցաւ. դրամ
պահանջելու՝ այդ հերքմանը հրատարակելու
համար,—սակայն արտասանման թերթերուն
անպատկառ հայհոյութիւններն ու լուսանկարն
ուղղող պարօնն ալ կամ էֆէնդին՝ նոյն ինքն
այդ Ալաւաճեանն է՝ «Փոնիզ»-ի զաւաճեալ խմ-
բագիրը, զոր նկարագրելու համար հարկ է պատ-
կերացնել սինըր թափառիկ մը, որ թէպէտ
հագուած շքուած՝ սակայն իր դէմը ելլողին ա-
կանջն ի վար կամացուկ մը կը փսփայ—«Էֆնդի»
տաւը փարա կու տան—այս է եղած միշտ իր
բովանդակ գործունէութիւնը իր խմբագրական
ասպարէզին մէջ՝ ամբողջ երեսուն վեց տարի:
Թէպէտ չենք գիտեր, թէ այդ դարավերջիկ
խմբագիրը քանի ոսկի կորցած է պատրիարքա-

րակվել «Սուրհանդակ» անունով ամենօրեայ լրա-
գիրը. խմբագիրն է պ. Տիգրան ձիվէլէկեան, որ
մի և նոյն ժամանակ «Ճէրիտէի Շարքիլէ» հայա-
տաւ և թիւրքաբարբառ լրագրի խմբագիրն է:
Մենք ստացանք նոր լրագրի առաջին տաւն
համարները. առաջին տպաւորութիւնը, որ ստա-
ցանք այդ համարների հետ հարեանցորէն ծա-
նօթանալուց, շատ նպաստաւոր է: Առաջին յո-
դուածի մէջ խմբագրութիւնն ասում է.

Ուղղութիւնը, որուն պիտի հետևինք, շատ
պարզ է. երկրին ու հասարակութեան շահերն
ու բարօրութեան միջոցները պիտի ըլլան մեր
լուր ռուսմասիրութեան առարկան, և մեր
ամբողջ հոգածութիւնը առնոց պիտի նուի-
րենք: «Ոչ մէկ աշխատութիւն, ոչ մէկ գոն-
դութիւն պիտի խնայեմք «Սուրհանդակ»-ը
ներս համար թերթ մը՝ որ միայն այս կամ
այն դասակարգին չըլլայ, հապա ազգինը:
Վստակցական ոգին և անհատական ամեն
նկատումներէ անկախ ըլլալով, «Սուրհանդա-
կ» ամեն բանէ առաջ և ամեն բանէ աւելի,
անկեղծ, անկողմնակալ թերթ մը պիտի ընենք,
որ, առանց դասակարգի խտրութեան, պաշտ-
պանութիւն աղբատի, հարուստին, ինչպէս նաև
մեծին ու փոքրին շահերը:

Կ. Պոլսի այժմեան հայ մամուլը դրու-
թիւնը այնքան անախախտ է, որ մեզ չէ կա-
րող չուրախացնել ամեն մի նոր թերթի, որ կը
հետեւն ազնիւ, մաքուր ուղղութեան: Հրաչնք
չենք պահանջում և հրաչք հազիւ թէ որ և իցէ
մէկը իրաւունք ունենայ սպասել ժամանակակից
հայ մամուլից: Բայց մի բան, որ անպայման
հարկաւոր է մեզ, այն է որ լրագիրը լինի ան-
կողմնակալ, հաստատամիտ, զուրկ պնակալեղութե-
ան անտիպի, որ մասնաւոր Կ. Պոլսի հայ
հրապարակախօսներից շատերին է վարակել:
Մենք ուրախ ենք, որ Կ. Պոլսի գրական հրա-
պարակ չը մնայ Համբարձում Ալաւաճեանին-
րի, Բիւզանդ Քէչեանիներին և Պարտիզակցի Վա-
հանների սեփականութիւն. մի ժամանակ այդ-
պէս էր, բայց հարուածը անցաւ և «Սրբեք»,
«Մասիս» նորից գլուխ բարձրացրին, կարողա-
ցան փոքր ի շատեւ, որքան ներսում էին հանգա-
մանքները, ազատել հայ մամուլի պատիւը: Ըստ

րանէն այդպիսի խայտառակ խմբագրական մը
հրապարակ հանելու համար և, կամ, անցեալ-
ները, իր մասին «Մշակ» մէջ երեցած իրաւա-
ցի և արդար ընդհատութեան վրայ դուցէ զայ-
նանալով, ուղած է արտասանմանի բոլոր հայ
թերթերը մէկ ջուրով լուալ. մենք սու միայն
կրնամք գիտնալ, թէ Նիւ-Յորքէն եկեղեցականի
մը կողմէ գրուած այդպիսի նամակ մը քննա գոյ-
ութիւն չէ ունեցած. այդ՝ միայն «Փոնիզ»-ի
խմբագիրն իսկապատկաւ մէջ մարմնացում
գտած է: Զայս կըսեմք սա բացորոշ ձեռնարու-
թեամբ՝ թէ այդպիսի նամակ մը եթէ իրօք գոյ-
ութիւն ունենար՝ մասնաւոր երբ եկեղեցակա-
նի մը կողմէ կը գրուէ՝ անշուշտ պատրիար-
քարանի ուղղուած պիտի ըլլար և պատրիար-
քարանը չը պիտի վարանէր զայն հրապարակ-
հանելու. իսկ եթէ «Փոնիզ»-ի հասցէին ուղ-
ղուած էր, ինչու նամակ չի հրատարակէր՝ որով
աւելի մեծ գործ մը տեսած պիտի ըլլար՝ ար-
տասանմանի հայ թերթերուն գլխուն նախա-
տիքներ տեղադէ աւելի:

Բայց թողուք այս ամենը...
«Փոնիզ»-ի զայրոյթն այս առթիւ անասման
է: Եթէ զոգն ինչ—կըսէ—հակառակ շարժումն
երկէր (փողերու յուսկէտս չի վատնուել մէջ)
իսկոյն դիտողութեանց ձայներ ու դանդա-
ներ կը լսուէին անշուշտ՝ նորին ամենապա-
տուութեան ամէն գործոց ու ձեռնարկութեանց
աշխուրջ դիտող պաշտօնական զանազան մար-
մնոց միոյն կամ միւսին, ինչպէս նաև Թիւր-
քիոյ զանազան թերթերու միոյն կամ միւսին
կողմէն, որ չըբացատրած են պատրիարքարա-
նը: Եւ մեք,—կը յաւելու—որ ի ծնէ, ի ման-
կութենէ մինչև ցարդ դիտեմք քաջ թէ քնչ
կարօտութիւնն, ինչպէս և իրարից կը տաւալի
կարօտեալն, և իրարն սուրբ ու նուիրական է
էր որ լռէինք և բարձր ձայներ չը հանէինք,
եթէ փոքրիկ զարուգութիւն մը նշարէինք կամ

երկոյթին, դրանց նման պիտի լինի և նոր
«Սուրհանդակ», ուստի և մենք կատարեալ ա-
ջողութիւն ենք ցանկանում նրան: Մենք, ի հար-
կէ, շատ առիթ կ'ունենանք ծանօթացնելու մեր
ընթերցողներին նոր լրագրի հետ: «Սուրհանդա-
կ» հրատարակվում է նախկին «Հայրենիք»-ի դի-
րով և նոյն տեսակ թղթի վրա. յստով ենք, որ
նմանութիւնը այսքանով չի վերջանայ: Նոր
խմբագրութիւնը ջանք է գործ դնում, որ լրագրին
կենդանութիւն հաղորդէ և, կասեմք այժմեանից,
քիչ չափազանցութիւններն էլ է դիմում: Այս-
պէս, № 9-ի ճակատին խոշոր տառերով տպված
է. «Հինգ նորավէպ կուզենք, կարդալ պայման-
ները չորրորդ երեսին մէջ»: Իսկ պայմանների
մէջ ասված է, որ խմբագրութիւնը որոնում է
փոքրիկ նորավէպեր, ամենաշատը 1000—1100
բառից բաղկացած. այդպիսի նորավէպեր խմբա-
գրութիւնը առնում է 40 դուռով (3 ռ. 20 կոպ.):
Գուցէ և խմբագրութեան աջովի այդպիսով
մրցութիւն առաջացնել գրողների մէջ, բայց մեզ
թւում է, որ յայտարարութիւններով վրայական
գրուածներ չի կարելի հաւաքել: Շատ լաւ կը
լինի, եթէ լրագիրը քիչ-քիչ վէպեր տայ, բայց
արժանաւոր բաներ, քան թէ ողորդ վրայական
բաժինը այնպիսի գրուածներով, որոնք արժա-
նիք չունեն և կամ շատ քիչ ունեն: Բայց դեռ
սպասենք:

ԻՇԽԱՆ ԻԼԻՍ ԶԱՎԱՍՏԱՎԱՐՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐԸ

IV

Պատկանանի վերաբերմամբ վրացիների մէջ
բարձրացած վայնասունը ցոյց է տալիս, որ
վրաց ինտելիգենցիան կարծիքով բարեւոր, եր-
ջանկութիւնը այն բանի մէջ է, երբ կրիտիկան
չէ բրբրում անցեալը, լայն չէ հանում կեղծիք-
ներ, ցած չէ գլորում կուռքերը: Մի րօպէ, ըն-
թերցող, ոգևորվեց իշխան ձափձափա՛ն այդ
գաղափարներով, դնալը նրա ետևից: Մի րօպէ
հաստատեց թէ ճիշդ որ հայ գիտնականը օր ու
գիշեր քրտինք է թափում ձորիներ գողանա-
լու, վրաց փառքն ու անունը նսեմացնելու հա-
մար. հաստատեց և այն բանին, որ հայը կաշա-

հաստատէինք:
Շատ դարձանալ է՝ որ Թիւրքիոյ հայ մամ-
ուլն մէջ միայն, նախապէս, «Բիւզանդիս» և
յետոյ «Փոնիզ» ամենէն աւելի արգահատողներն
եղած են պատրիարքարանի վրայ: Ի՛նչ ազնիւ
մարդիկ են դեռ, որպիսի զուրգութեանը կա-
րօտեաներու համար, որպիսի հսկողութիւն
պատրիարքարանի շուրջը, և, որպիսի մօրմօր
միոյն և միւսին կողման... և այն խմբա-
գիրներն են ասոնք՝ որ ազգին ամենէն տաղ-
նապալից ժամանակ յաւուր տեղապահութեան
Բարթոլոմէոսի, երբ մեծաքանակ գումարներ
կը հանէին պատրիարքարան, և փոխանակ որ-
բերու և այրիներու՝ անոր ասոր քսակները կը
լեցուէին, այս խմբագիրներն էին՝ Ալաւաճեան
ու Քէչեան, որ գրաթուղիմէնս մինչև իննեորդ
երկինքը կը բարձրացնէին...

«Փոնիզ»-ի խմբագիրը պէտք էր գիտնար, որ
իրմէն շատ աւելի՝ արտասանմանի հայ լրագրի-
րները իրաւունք ունին հսկելու պատրիարքարա-
նի ողորմաբաշխութեան վրայ, քանի որ մինչև
հիմայ զրկված նպաստի գումարներէն կէսէն ա-
ւելին՝ արտասանմանի ազգայնոց քսակներէն
ելած է, և ինչ կը պահանջեն արտասանմանի
լրագիրները՝ եթէ ոչ օրինաւոր հաշուետուու-
թիւն մը՝ մինչև հիմայ եկած ու բաշխուած գու-
մարներուն:

Երբ տարի է որ անթիւ գումարներ կը թա-
փին պատրիարքարան և երբեք չի ներկայացուե-
ցաւ օրինաւոր հաշուետուցակ մը՝ որ գոնացում
պատճառէր գոնէ նուիրատու բարեբարներուն:
Անշուշտ արտասանմանի հայ լրագիրները չէին
կրնար հետեւի «Փոնիզ»-ի ծիրած գաղափարին՝
թէ «զաւակը հօրմէն իրաւունք չունի հաշիւ պա-
հանջելու», իսկ մենք ընդհակառակը ուրախ ենք
տեսնելով՝ որ գոնէ արտասանմանի հայ թեր-
թերը ձայն կը բարձրացնեն, ըստ որում և մեր
պատրիարքարանն ալ, ի հարկէ ստիպալ գոնէ,
կը փութայ արձանագրութեան նոր տոմարնե-

ձյաբար
 երկուս է,
 մի ճիշդ
 բաղադր
 Բնկերո
 կղբում (
 ին բաց
 Ին 500
 առնելով,
 առ թայն
 ամառակ
 նկատմ
 ողնի 50
 լի Բ Բ
 00
 Թե
 ած 60
 լուծա
 ինչու 5
 րհետա
 րհարա
 անեմ, որ
 ին բնկ
 արուց: Պ.
 ի նոսա
 բում եմ
 ցանկա
 թիւիք:
 Պ. Գիւղ
 անկը 2
 ստեղծ

Սիրտանան ճանապարհը կառուցվի զերմանա-
կան փողով: Ուսումնասիրող ցանկանալով իր
Անդրկասպեան ճանապարհը դէպի հարաւ շա-
րունակել, ճանապարհի երեք թաղերը արդէն
պատրաստ կը գտնուի:

—Բոլորական «Plovdiv» լրագիրը հաղոր-
դում է մարտի 28-ից. «Ալեքսին կիրակի օրը,
առաւօտեան, հայոց Արսէն եպիսկոպոսը, որ
գտնվում է այստեղ, և մեր քաղաքի 3—4 հայեր
գնացին եկեղեցի, ուր եպիսկոպոսը մտադրու-
թիւն ունէր պատարագ մատուցանել: Այնտեղ
նրանք հանդիպեցին կ. պօրեցի մի քանի հայե-
րին, որոնք բնակվում են այստեղ և ինչո՞ւ են
եպիսկոպոսին: Սրանք չը կամեցան թողնել ե-
պիսկոպոսին պատարագ մատուցանել եկեղե-
ցում, սկսեցին իրենց եպիսկոպոսի կողմնակից-
ներին հետ և մինչև անգամ գլխին վիրաւորանք-
ներ հասցրին: Ոստիկանութիւնը դուրս բերեց
նրանց եկեղեցուց, յանցաւորներին արդարադա-
տութեան յանձնեց և եկեղեցին փակեց: Այդ
երկպառակութիւնները շարունակվում են եպիս-
կոպոսի այստեղ գալու օրէն, որին մի քանիս-
նեք պաշտպանում են, իսկ միւսները ատում են»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՐՈՒԹԻՒՆ: Ապրիլի 1-ին, Նիկոլայեւեան
գլխաւոր գիտնացող տնոց իր 50-ամեայ յօրե-
ւանը: Դիտանացում մաղթանք կատարվեց:
Ներկայ էր գիտութիւնների ակադեմիայի օգոս-
տափառ նախագահ Մեծ Նիկոլայ Կոնստանտին
Կոնստանտինովիչ: Ժամը 2-ին գիտութիւնների
ակադեմիայի դահլիճում տեղի ունեցաւ փառա-
ւոր նիստը, որտեղ ակադեմիայի փոխ-նախագահ
և ակադեմիկոս Մայիով կարգադրեց Բարձրագոյն
հրովարտակը, որով գիտնացող Նիկոլայեւեան
անունն է յատկացնում, նաև թողարկում է
նրա թղթակցներին կրել իրանց վրա, յօրե-
ւանի առթիւ, Բարձրագոյն սանձանած նշանը:

ՊԱՐԻՋ: «Figaro» լրագիրը տպում է գնեթալ
Գոնդի ցուցմունքների վերջաւորութիւնը և ա-
պա Սերբի, Բելգի, Սոկ և Դիւլթո գնեթալ-
ներին: Գոնդ մատնացոյց արաւ Բերտիւլ-
սի ցուցմունքների նիւթական սխալները վրա:
Բելգի չէ տեսել Էստէրհային Շալոնում 1894
թւին: Սոկ և Դիւլթո ցոյց տուին Դրէյֆուսի
օգտին:

«Eclair» լրագիր մէջ յայտարարված է Տրա-
բէի ցուցմունքը, որ պատմեց թէ Իտալիայի
գետական իշխան Ծօրնիէլի նրա հետ խօսակցու-
թեան ժամանակ, 1898 թւի մարտ ամսին
յայտնել է, որ բորդերի և այն դոկումենտի
որտեղ ասված է «այդ անիրաւ D», յայտարարե-
լը համոզեցին իտալական և գերմանական ատոա-
չէներին, որ Դրէյֆուս զո՞հ էր սխալմունքի: Բօր-
դերի մէջ յիշված դոկումենտները արդարև յանձն-
ված են եղել գերմանական ատոաչէին, բայց ոչ
թէ Դրէյֆուսն է եղել յանձնողը, այլ մի ուրիշ օֆի-
ցէր: Միայնակօպէն գրում էր Պանիցարդին, թէ
չէ ճանաչում Դրէյֆուսին: Նա բորդերին վերա-
գրում էր Էստէրհային Ծօրնիէլի պատմեց,
թէ Էստէրհայի 1897 թւի հոկտեմբերին Միլան-
կոպէնից պաշտպանութիւն խնդրեց: Երբ որ
Միլանից անցանք, նա սպառնաց թէ ինքնա-
պաշտպանութիւն կը գործի: Մի ուրիշ խօսակցու-
թեան մէջ Ծօրնիէլի ասաց, որ «այդ անիրաւ
D» խօսքը վերաբերվում են ուրիշ անձի, ոչ
գլխաւորական, որը տուել է գերմանական ատ-
ոաչէին ըստեղծելու և տեղադրական պլաններ,
որոնց ուրիշ կերպ դժուար էր ձեռք բերել:
Այդ անձնաւորութիւնը յայտնի էր օտարերկրեայ
ատոաչէներին:

ԲԵՐԼԻՆ: Կայսերական սէյմին առաջարկված
է մի հարցադրում, ստորագրած պահպանողա-
կան կենտրոնի և ազգային—ազատամիտների
կողմից այն բանի մասին, թէ արդեօք մտադիր
է կայսերական կանցլերը ըստաւորութիւններ
տալ Սաւոյի դէպքերի առթիւ, որոնք ծանր
կերպով խախտում են գերմանական շահերը,
նմանապէս ձեռք առած կամ մտադրված մի-
ջոցների մասին:

ԲԵՐԼԻՆ: Մի քանի լրագիրներ յայտնեցին
Վիլհելմ կայսրի մտադրութեան մասին այս տարի
ճանապարհորդելու դէպի Մոնակո և Եգիպտոս:
Այդ լուրերը ոչ մի հիմք չունեն:

ՊԱՐԻՋ: Լօկրուայի և կառավարութեան ա-
ռաջարկութեան համաձայն, ծովագետ Վիլվէր-
վի մնաց իր պաշտօնում:

ՀՈՒՄ: Պաշտօնապէս հաստատվում է, որ
«Tribuna» լրագիր անուանված անձներ յիշաւ
նշանակված են Իտալիայի կողմից իբրև ներ-
կայացուցիչներ Հաագայում տեղի ունենալիչ
կոնֆերենցիայում:

4 ապրիլի

ՊԵՏԵՐՐՈՒԹԻՒՆ: «Правительственный Вестник»
լրագրում հրատարակված է մանրամասն հաղոր-
դագրութիւն ուսումնողական անկարգութիւնների
պատճառների և ընթացքի մասին, մի և նոյն
ժամանակ ասված է, թէ շարժումը տարածվեց
պետութեան գլխաւոր բարձրագոյն դպրոցնե-
րում: Ամեն տեղ գտնվում են երկու կուսակցու-
թիւններ՝ չափաւոր, որը կարգը վերականգնելու
կողմնակից է, և ծայրայեղ, որ պահանջում
է շարունակել անկարգութիւնները՝ համալսա-
րանական իշխանութիւնից զիջումներ ձեռք բե-
րելու նպատակով: Դեկլարում է այդ շարժմա-
նը Պետերբուրգում այդպէս անուանված կաղ-
մակերպող կոմիտեում, որը հրատարակեց սլոգ-
անագրութեան և հրաւերներ: Շարժման պարա-
զլուները կալանաւորված են, մի և նոյն ժամանակ
բռնված են զանազան արգելված հրատարակու-
թիւններ: Բարձրագոյն դպրոցների շարժման պա-
րագրութիւնները յարաբերութիւնների մէջ են գտն-
վում և սարսափի տակ են պահում կարգը վերա-
կանգնելու կողմնակից մեծամասնութիւնը: Ան-
կարգութիւններ տեղի ունեցան Պետերբուրգի,
Մոսկվայի, Սիբիրի, Օդեսայի, Նիժնի-Նովոգորոդի,
Վարշավայի և Տոմսկի համալսարաններում, տեխ-
նիկական, լեռնային և անտառային ինս-
տիտուտներում, Պետերբուրգում, և Նովո-Սիլե-
սանդրայի երկրագործական դպրոցում: Ագիտա-
տօրները պահանջում են յետ ընդունել և ներել
բոլոր մեղաւոր ընկերներին և փոխութիւններ
համալսարանական տեսչութեան մէջ: Պետեր-
բուրգի կաղմակերպող կոմիտեում հրատարակեց մի
յանդուգն շրջաբերական, որով մատնացոյց էր ա-
նում շարժման հակահասարակական բնատուր-
թեան վրա և բարոյութ էր թէ անհրաժեշտ է
կռիւ մղել ըստաւորական թէֆօրմներ ձեռք բե-
րելու համար: Այդ շրջաբերականը ուսանողնե-
րի մեծամասնութեան զայրոյթը յարուցեց, և
այդ պատճառով այդ կողմ չը տարածվեց: «Пра-
вительственный Вестник» լրագիր հաղոր-
դագրութիւնը հետեւեալ խօսքերով է վերջանում.
«Ձեր նպատակն այն բանի վրա, որ անկարգու-
թիւններին մասնակցում էր ունեցողներին հա-
մեծատարաբ փորը մասը, բարձրագոյն դպրոց-
ների մեծ մասից անհրաժեշտ եղաւ արտաքին
ուսանողների բաւական նշանաւոր թիւ, որոնց
յամառութիւնը անկարգութիւնները շարունա-
կելու համար հնարաւորութիւն էր տալիս այլ
ևս պահելու այդպիսի ունեցողներին ուսանող
երիտասարդութեան շրջանում: Այդ միջոցը կը
գործ դրվի արանից յետոյ էլ, որովհետեւ ուսա-
նողները պահանջով ոչ մի չեղում է կարելի
թող տալ դրոցներում գործադրող կանոնա-
դրութիւններին, և կանոններին, նոյնպէս և զույ-
րոցական պարապմունքների որոշած կարգը և
քննութիւնների ժամանակը չէ կարելի փո-
խել: Այդ միջոցի ձեռք առնելը արձակված
ուսանողներին շատերին, որոնք կը սխալ-
վին մոլորութիւններից, որոնց մէջ խրվել են
պատանեկական անհասկացողութեամբ և անփոր-
ձութեամբ, չի զրկի հնարաւորութիւնից կըր-
կին ընդունվել դպրոցներում և աւարտել
իրանց ուսումը. բայց, յամենայն դէպս,
այդ ներողամտութիւնը կարող է հետեւանք
լինել միայն այն դէպքում, երբ նրանք կը խոստո-
ւանան իրանց սխալները և մոլորութիւնները,
և ոչ թէ հետեւանք խմբական բռնի գործողու-
թիւնների, այն սխալ հաշվով, թէ զպրոցից ար-
ձակված ուսանողներին նշանաւոր թիւը այդ
դպրոցները դժուար դրութեան մէջ կը գնեն:
Ինչ վերաբերում է նրանց, որոնք, օգուտ
բաղելով դէպքից, ուղղում են իրանց
ջանքերը այն բանի վրա, որպէս զի տանեն ու-
սանող երիտասարդութիւնը ինչպիսի յանցաւոր
գործողութիւնների ճանապարհը, որոնք հակա-
կառավարչական նպատակներն են ծառայում
և ուսումնարանների հետ ոչինչ առնչութիւն
չունեն, այդպիսի անձանց վերաբերմամբ օրէն-
քով սանձանված պատժական միջոցներ կը գոր-
ծադրվեն»:

ՏԱԳԱՆՐՈՒՄ: Ազով-Դոնեան բանկի ակցիոնէր-
ների ընդհարուր ժողովը հաստատեց 1898 թւի
հաշիւը: Զուտ արդիւնքը 1,329,041 ռուբլի է:
Բոլոր ծախսերը դուրս գալով, զիվիդենդ է նը-
շանակված 1,140,000 ռուբլի, որ կազմում է
38 ր. ակցիայի վրա 45,510 ր. մնացորդը
միացվում է ներկայ տարվայ ոտացած օգուտին:
ՄԱՐԻԻՒՆ: Սինիստրների խորհրդի մէջ Սի-
վիլա յայտնեց, որ կարլիստների մէջ գոյութիւն
ունեն երկպառակութիւններ:
10ՆՎՈՆ: Համալսարանի ժողովը: Շարունա-
կելով իր ձառք բերված մասին, զանազանի
կանցքը մատնացոյց արաւ պետական ծախսե-

րի անդադար աճման փաստի վրա և ասաց, որ
կթէ այդպէս շարունակվի, այն ժամանակ պար-
լամենտը ստիպված կը լինի մեծացնել հարկերը
կամ եկամուտների նոր աղբիւրներ գտնել: Միս-
սերի աւելանալը պէտք է վերադրել, զլիաւորապէս,
գլխաւորութիւններին: Կառավարութիւնը յոյս է
տածում, որ պետութիւնների առաջիկայ կօնֆե-
րենցիան կարող կը լինի սահման դնել զինա-
ւորութիւններին, որոնք այնքան կորստաբեր
աղբեցութիւն ունեն երկրի արդիւնաբերու-
թեան, եւանդի և դրամական միջոցների վրա և
որից, կը ցանկանային, ի հարկէ, ազատվել
մինչև անգամ աշխարհիս ամենահարուստ աղբե-
րը (Հաւանութեան ըստաւորութիւններ): Մի
և նոյն ժամանակ նա երկրի է յայտնում, որ
Անգլիայի զօրքի և նաւատորմի համար եղած
ծախսերը կըծառնու զէպքում, ստիպված չը
լինենք մեծացնել մեր ծախսերը ուրիշ ուղղու-
թեամբ:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՆԿՈՒՄ ԲԱՆԿԱՆԻՍ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻԲԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԻՍ
Կիրակի, ապրիլի 4-ին 1899 թ.
Հայ դերասանական ընկերութիւնը, մասնակցու-
թեամբ օր. Ա. Կա մ ե ա ն ի և պ. Գ. Մ ի ր ա-
ղ ե ա ն ի կը ներկայացնէ

I
„Ընտանեկան Գաղտնիք“
Կով. 3 գործողութեամբ:

II
„ԿՈՒՈՒԻ ՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԷՒ“
Կով. 1 գործողութեամբ, Տէր-Գրիգորեանի:
Մասնակցում են՝ տ. Զարեկ, օր. Աղաճեան,
պ. պ. Տէր-Դաւիթեան, Միլադեան, Գիտնի, Թեր-
զիբաշեան, Զարիֆեան և այլն:
Սկիզբն է ձեռք 8/8, ժ. ԵՐԵՎԱՆԵԱՆ

Լ յ յ տ ե ս աւ
Փ Ո Ր Ր Ո Ր Ր
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆԲԸ
ԳԻՆԵ Ե 2 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.
Դիմել՝ Тифлисъ, Авчальская, д. № 13,
священнику Габріэлю Теръ-Габріэлянцъ.
(2) 1—6

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՒՆԱՅԻ ատենանում՝ սոյն
ապրիլի 9-ին, նշանակված է աճուրդ, առանց կրկնաձրգի, վարձու տալու ս. Էջմիածնի
կալուածքի վերին յարը, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա, 5-րդ քաղաքամա-
սում: Պայմանները մասին ծանօթանալ Կոնստանտնուպոլիսի գլխաւորաւոր:
Անդամ Կոնստանտնուպոլիսի Գրիգոր աւագ քահանայ Տէր-Բարսեղեանց.
(2, Ե. 5.) 1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից:

Ն. հակառակը Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլսո: Մեկնում է Բաթում
միջ՝ չորեքշաբթի, 14/26 ապրիլ, ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԿԻ: Ն. այսպէս
շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գնեքով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ տալաւու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակաւորներին՝
ԲԱԹՈՒՄԻՍԻ—պ. Վիկտոր ԴԱՐՈՒՄԻ, Նարէլեմուրա: ԹԻՖԼԻՍԻՍԻՍԻ—պ. Ս. Բարեկենդա-
նեանին, Սիսի փող. Խօջափարտիօսով և Մալուրաձէ քաղաքաւոր: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Դիլորաբեանին
Կորուբակինայայ հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻԹՍԿ—պ. Մելիքի շերտնորդներին:

(Ե. 5. 2.) 19—20

Թիֆլիսի վաճառականների աւագ եւ նրա ընկերները

սրանով յայտնում են ի գիտութիւն 1 և 2 կարգի պ. պ. վաճառականներին,
թէ որովհետեւ մարտի 21-ին նշանակված ընդհանուր ժողովը, 1897 և 1898 թւերի
եղի և մուտքի հաշիւները քննելու և վաճառականների մի աւագ և նրա օգնական-
ներ ընտրելու համար, չը կայացաւ բաւական վաճառականների ներկայ չը գտնվելու
պատճառով՝ ուստի նշանակելով ապրիլի 4-ին, կիրակի օր, նոր ընդհանուր ժողով,
խնդրում են պ. պ. վաճառականներին շնորհ բերել նշանակած օրը առաւօտեան ժամը
11 1/2-ին քաղաքային դռմայի դահլիճը վերոյիշեալ նպատակի համար: Յայտարարվում
է, որ ժողովը կը կայանայ՝ որքան էլ վաճառականներ ներկայ լինեն: 3—3

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
կար ու ձեռք դպրոցում ապրիլի 4-ին, 5-ին և 6-ին
տեղի կունենայ աշակերտուհեաց ձեռագործների
վաճառումը առաւօտեան ժամը 10—3-ը և երե-
կոցեան ժամը 5—7-ը: Դանօվսկայա № 25:
(5. 2. Ե.) 2—3

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒ-
ԹԻՒՆԸ հրաւիրում է ընկերութեան
անդամներին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, ապ-
րիլի 4-ին, առաւօտեան ժամը 12-ին,
կար ու ձեռք դպրոցը, Դանօվսկայա № 25,
քննելու պ. նահանգապետի առաջարկած
նոր կանոնադրութեան նախագիծը:
(5. 2.) 2—2

ԲԺԻՇԿ 3. 3. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, արտական, մոր-
թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոցեան 5—7 ժամը:
Դանօվսկայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. 5. 2.) 20—100



Հ Ր Ա Ի Է Ր
Ամսիս 4-ին, առաջիկայ կիրակի օրը, 12
ժամին, ս. պատարագից յետոյ, Նորաշէն
ս. Աստուածածին եկեղեցւոյ բարեպաշտ
Ժողովանքը հրաւիրվում են յիշեալ եկե-
ղեցին՝ նոր երէցփոխ ընտրելու:
Դործակալ ա. մ. եկ. հ. Տիփս.
2—2 Զաքարիա քահ. Զարդեղեանց

Լ Ո Ւ Մ Ա Ց
ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ
Վէպ Թիֆլիսի կեսօրից
ԳԻՆԵ Ե 60 Կ.
Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և
Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոց-
ներում: Դիմել ուղղակի այդ գրավաճառանոց-
ներին: 10—10